չի՝ որի ստեղծագործութիւնները վճիտ են ու հնչեղ, իրենց կատարելութեամբ անթերի։ Որոնց դիտելիս՝ ուզում ես ագահութեամբ շնչել հողի խոնաւ բուրմունքը, սուզուել երկնի անհուն կապույտում։ Ուզում ես հպուել այն ամէնին, ինչ այնքան գեղեցկահաճ պատկերուել են անվերջ ապրելու ցանկութիւն ներշնչող սարեանական կտաւներում։ Ուզում ես միշտ վայելել նրա վրձնած խիստ, բայց նրբագեղ լեռների հմայքը, անվերջ շրջագայել այդ արեւազօծ զմայլիչ լեռներով ու հարթավայրերով։ Ուզում ես... որ Սարեանն ու սարեանականը յաւերժ ապրի։

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ծառը կը ճանչցուի իր պտուղէն, իսկ մարդը իր գործերէն՝ բարի արարք մը երբեք չմոռցուիր. ան որ ազնուութիւն կը սերմանէ բարեկամութիւն կը քաղէ, եւ ան որ ազնուութիւն կը ցանէ՝ սէր կը հաւաքէ։

Սուրբ Բարսեղ

Ազնուութիւնը՝ արարքէ աւելի կեցուածք մըն է, արտայայտութիւն մը, նայուածք մը եւ նոյնիսկ պարզ հպում մը։ Ուղիղ անձ մը բարձրացնող ժեսթն է։

Պղատոն

Երեք բաներ անհրաժեշտ են մարդկային կեանքին մէջ. առաջինը՝ ըլլալ ազնիւ, երկրորդը՝ ըլլալ ազնիւ, եւ երրորդը՝ դարձեալ ըլլալ ազնիւ։

Հէնրի Ճէյմս

Ազնուութիւնը այն լեզուն է, որ խուլը կրնայ լսել եւ կոյրը տեսնել։

Մարք Թուէյն

Լաւ բառերը լաւ զգացումներ կ՚արթնցնեն մարդոց սիրտին մէջ, միշտ ազնուօրէն խօսեցէք։

Բոտ Ուիլիըմզ

Կեանք առանց պայքարի, կը նշանակէ կեանք առանց յաղթանակներու։

Ափրիկեան ասացուածք